



Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

## ՇԽՄՈՒՐԱՏԻ ՎԱՆՔԸ

ՇԱՄԵԱԳԻՆԻ ՇՐՋԱՆ

### § 1



առնական անցյալին վերաբերող հուշարձաններով հարուստ անկյուններից մեկն է մեր երկրում Շամշադինի շրջանի Հասանի-ջուր (Հասան-սու) գետակի հովիտը, որը նեղ շերտով ձգվում է հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք: Զանազան տիպի հուշարձաններից հատկապես դուրսառեղների շատությամբ աչքի է ընկնում գետակի վերին հոսանքը, որտեղ գետակի աջ առ ձախ ափերին, սկսած Մրդուզ սարի լանջերից մինչև Մաղկավան գյուղը (նախկին Վելի գյուղ), մի ժամանակ եղել են քանից ավելի գյուղեր իրենց եկեղեցիներով, գերեզմանոցներով և այլն: Այդ գյուղերից մի մասի ավերակները կամ դրանց մնացորդներն են միայն մնացել այդ ձորի անտառապատ լանջերին, իսկ մյուս մասի լոկ անունը՝ պահպանված տեղացիների հիշողության մեջ:

Ահա այդ ևերեմանի խիտ բնակչություն ունեցող երկրամասում, ժամանակի ու բնության քայքայիչ հարվածներին քիչ թե շատ դիմացած, երկու վանքեր կան, մեկը ձորի խորքում, իսկ մյուսը՝ սարալանջին: Դրանք Շխմուրատի և Կապտավանի վանքերն են: Թեև այդ երկու վանքերն էլ մեր հուշակավոր վանքերի թվին չեն պատկանում և շատ քիչ են այցելվում, սակայն մեր երկրի ու ժողովրդի անցյալի պատմությունը, հարտաբափնությունն ու շինարվեստն ուսումնասիրելու համար կարևոր հուշարձաններ են:

Այս հոդվածով նպատակ ունենք ընթերցողներին ծանոթացնելու հիշյալ վանքերից առաջինի՝ Շխմուրատի վանքի հետ:

Ճանապարհը Հասանի-ջուր գետակի հովիտով, Պատավարար գյուղի վրայով մինչև Հասանի գյուղը, արդեն ծանոթ է «Էջմիածին» ամսագրի ընթերցողներին, Անապատ կամ Նոր-Վարազա վանքի նկարագրությունից:

Հախումից 2,5—3 կիլոմետր հեռու, ձորն ի վեր, գտնվում է Մաղկավան գյուղը, իսկ դրանից մոտ 6 կիլոմետրի վրա, գետի հարավ-արևմուտք՝ Շխմուրատի վանքը:

Ճանապարհը Հախումից Մաղկավան և այնտեղից մինչև վանքը շարունակ ընթանում է գետակին զուգահեռ, դրա ձախ ափով և որևէ դժվարություն չունի, և կարելի է ավտոմեքենայով գնալ:

Մաղկավանից այն կողմ, մեկ կիլոմետր հեռավորության վրա, Մրդուզ գագաթից ձգվող ձախափնյա լեռնաշղթայից մի անտառապատ լեռնարագույն իջնում է գետի գետակը և փակում հովտի բերանը: Այդտեղից գետի վանքը տանող ճանապարհը հյուսիս-արևմուտք է: Հին ճանապարհը, որն ավելի կարճ է, բայց դժվարանցանկի, կտրում անցնում է լեռնարագույն իջնում ձորը՝ վանքի մոտերքում, իսկ նոր ճանապարհը գետակի ափով շրջանցում է այդ լեռնարագույն և ձորի հատակով թեթևակի բարձրանում գետի վեր, անտառի միջով:

Գնալով ձորակը մոտենում է կուսական թավոտներով ծածկված, ամպամերձ բարձրություններից զահավեժ իջնող լեռների հանգույցին: Ճանապարհն ստվերող սաղարթների միջից անախնկալ դեմոկրատիկ և ելնում առնելի բարձրություն ունեցող մի հսկա քարաժայռ

1. «Էջմիածին» ամսագիր, 1952 թ., սեպտեմբեր-դեկտեմբեր համարներում:

և փակում ձորի բերանը, միայն մի նեղ ճեղք թողնելով վերինց սրբնթաց իջնող զետակի համար: Այդ քարաժայռի ստորոտում, գետակի ձախափնյա բարձրության վրա Շխմուրատի վանքն է տեղափոխված: Շինված լինելով զեղնագույն կրաքարից, վանքը իր պարզ ու գրավիչ արտաքինով, յուրահատուկ հրապույր ու շերմութուն է տալիս շրջակա բնության խիստ ու ահարկու տեսարանին:

## § 2

Այն փոքրիկ հարթությունը, որի վրա կառուցված է վանքը, նեղ շերտով ձգվում է արևմուտքից արևելք: Դրա քնական սահմաններն են կաղմում արևմուտքից՝ հսկա, աշտարակաձև քարափը, հյուսիսից՝ խիստ թևրովյամբ իջնող սարի ստորոտով անցնող ճանապարհը, հարավից՝ քարափի դիմացի ձորակը, իսկ արևելքից՝ գետակի ձորը, երկուսն էլ խորն ընկած և զվարամատչելի, ծառերով ու մացառներով ծածկված ափերով:

Վանքը համեստ չափեր ունեցող չորս շենքերի միաձուլ մի ամբողջություն է: Առաջին իսկ թևնակի ակնարկից երևում է, որ այդ նուշարձանների կառուցողները նպատակ չեն ունեցել որևէ բանով մարդկանց զարմացնելու, կամ դրանցով պարծենալու: Ամեն ինչ այդտեղ զուտ է, պարզ, և հենց այդ պարզությամբ ու անպաճույճ արտաքինով դրավի:

Նուշարձանների այս խումբը հետևյալ շենքերից է բաղկացած. եկեղեցին, դրան կից՝ արևմուտքից՝ ժամատունը, հարավից՝ գավթի, և եկեղեցու ու գավթի միացման անկյունում՝ «ստորանիկ» կոչված շենքը:

Առաջին երեք գլխավոր շենքերն էլ սրբատաշ քարից են շինված, իսկ «ստորանիկ»-ը՝ անտաշ և կիսատաշ քարերից, կրով ծեփված:

Բացի այս շենքերից, վանքն ունեցել է նաև օժանդակ շենքեր, միաբանության համար բնակարաններ, պարիսպ և այլն, սակայն դրանցից միայն քարակույտեր են մնացել՝ վանքի արևելյան կողմում:

## § 3

Այժմ աշխատենք համառոտակի նկարագրել հիշյալ չորս շենքերը, առանձին-առանձին:

ա) Եկեղեցին, որը գլխավոր և ամրապետող շենքն է վանքի մեջ, հասակագծով երկարավուն քառակուսի է, երկարությամբ (զբաղի) 8,30 մ., լայնքը՝ 6,55 մ.: Պատերի հաստությունը 65—70 սմ. է: Արևելյան ճակատում, արսիդի և դրան կից գտնվող խորանների (ավանդատների) միացման գծի վրա, պատի մեջ կան երկու եռանկյունաձև խորշեր, որոնց կողերը պատի խորքում

միանում են կիսաշրջանաձև գոգավորությամբ. ինչպես այդ գոգավորության ծայրերին, նույնպես և խորշերի արտաքին անկյուններում, վերից վար իջնող զույգ անկյուր նավթ կտրվածքների մեջ տեղափոխված են մեկական զաններ: Ահա այդ խորշերն իրենց համեստ, բայց ճաշակով կառարված ձևավորությամբ, եկեղեցու շենքի միակ զարդաբանքն են կաղմում՝ դրսից: Տանիքի խաչաձև դասավորված սաղեքի կենտրոնում ութ կողանի գմբեթն է բարձրանում: Գմբեթի վեղարի և սաղեքի նրսապատ սաղեքը թափված են, վեղարինն ամբողջովին, իսկ սաղեքինը մասամբ, տեղ-տեղ թափված են նաև գմբեթի թմբուկի և պատերի վերին շարքի քարերը: Ընդհանուր առմամբ եկեղեցու շենքը, մուսնեքի համեմատությամբ, ավելի լավ դրություն մեջ է:

Ներսից եկեղեցին խաչաձև է. ետքն ընկած արսիդի երկու կողմերում կան երկու զույգ երկհարկ փոքրիկ խորաններ: Վերին հարկի խորանների աստիճաններով բարձրացող մուտքը բնից է, իսկ ցածի խորաններինը բացվում են եկեղեցու մեջ:

Արսիդի երկու ծայրերին և հյուսիսային ու հարավային պատերին կից գրված մույթների վրայից բարձրանում են գմբեթակիր կամարները: Այդ մույթների արևմտյան զույգը (պատերին կցված) խորանների արևմտյան ճակատից հեռու են 2,28 մ., իսկ եկեղեցու արևմտյան պատից՝ 1,40 մ.:

Բնմբ բարձր է և արևելյան զույգ մույթների (արսիդի ծայրի) գծից դուրս ընկած:

Եկեղեցու լուսավորությունն ազոտ է: Մեկական կարճ ու նեղ (զբաղ բացվածքի լայնքը 11—20 սմ.), դեպի ներսը լայնացող լուսամուտներ կան գմբեթի չորս գլխավոր ճակատներին, արսիդի և խորանների արևելյան և եկեղեցու հյուսիսային պատերի մեջ:

Եկեղեցին ունի երկու մուտք, որանցից գլխավորը՝ արևմտյանը՝ բացվում է ժամատան մեջ, իսկ երկրորդը՝ հարավից՝ գավթի մեջ: Ժամատան մեջ բացվող մուտքը լայն է. բացվածքը եկեղեցու մեջ 1,3 մ., իսկ ժամատան կողմից՝ 3,6 մ., որը բազմաթիվ անկյուր նավթ կրտվածքներով և կիսազաններով է զարդարված: Սա եկեղեցու շենքի երկրորդ զարդարանքն է:

բ) Ժամատունը շինված է եկեղեցու արևմտյան պատին կից: Այդ պատը ծառայում է իրրև արևելյան պատ ժամատան համար: Դա մի պարզ, իրար համարյա հավասար կողեր ունեցող քառակուսի շենք է, երկարությունը (զբաղի) 10,33 մ., իսկ լայնությունը 10,49 մ.: Տանիքի ծանրությունը կրող կամարները հաստատված են երկու սյուների, եկեղեցու արևմտյան պատին կից գրված երկու մույթի-

րի, ժամատան արեւմտյան սրահին կից գույշ  
կիսամուշկերի և հարսիսային ու հարսվային  
սրահների մեջ եղած կարունակների վրաւ նշ  
կարծնակներն ալիւի դեկորատիւ բնույթ ու  
նեն և թաղի ծանրութունն ալ իրաւ կողմն  
րում, հիմնականում սրահներն են կրում: Զույգ  
սլուները տեղադրված են ժամատան ընդ  
դասիական առանցքին մոտ: Երգիկի վրանա  
ձե թաղը նստած է ալ սլուների և եկեղեցու  
սրահին կից գրված մուշկերի վրայից բարձ  
րացող կամարների վրա, ալ պատնշառով էլ  
ժամատան արեւմտյան կիսան սրահին է լուսա  
վորված ջան արեւմտյանը:

ժամատան մուտքը անդամորված է հարա-  
վաչին պատի արևմտյան ծայրին:

Կատարը ծածկված է հողի հաստ շերտով:

Քանդված են երգիչի բացվածքի վերին շարքերի քարերը և հյուսիս-արևմտյան անկյունի թաղը։ Ընդհանրապես տանիքը խառնուղի դրոթյան մեջ է և փշերն վտանդի են։

դ) Գավիթը շինված է եկեղեցու հարավ-  
այն պատին կից, այդ կողմից բացվող մուտ-  
քի առաջ: Չափերն են՝ դրսից, երկարությու-  
նը 7,40 մ., իսկ լայնքը՝ 6,76 մ.: Պատերի  
արտաքին երեսպատ բարերը թափված լինե-  
լու պատճառով բերված շափերը մուտքի  
հշտաթյամբ են հաշվված: Այս շենքը սեփա-  
կան մի ամբողջական պատ ունի միայն՝ հա-  
րավայինը: Իրեն հյուսիսային պատ օգտա-  
գործված է եկեղեցու հարավային պատից  
7,40 մ., սկսած դրա արևմտյան ծայրից, իսկ  
արևմուտքից և արևելքից դավիթ սեփական  
պատամասերը շարունակվելուն են կազ-  
մում ժամատան արևելյան պատմաստի  
և «Խորանիկ»-ի արևմտյան պատի:

Քաղաքի ներքոյում, արեւմտյան և արեւելյան պատերին կից զրկած են Ներկուսական մուշթեր, որոնցից հլուսխաային զուլզը, որն ալի- լի մեծ շափեր ոմի, կցված է եկեղեցու հա- րաւային պատին, իսկ հարաւային զուլզը նույն կողմի պատից քիչ հեռու է տեղաւոր- ված: Տանիքը հաստատուած է եղել այդ մուշ- թերի վրայից բարձրացող կամարների վրա: Թե՛ տանիքը և թե՛ կամարներն այժմ քանդ- ված են:

Պատեիրք քանդված լինելու պատճառով, այժմ դժվար է որոշել, թե զավթի մուտքը որ կողմից է եղել։ Թվում է, թե դա պետք է եղած լինի արևմտյան զույգ մույթների մեջ-տեղից, որովհետև վանքի բակի հատակը միայն այդ կողմից է հասանալովում թե՛ զավթի և թե՛ ժամատառն հասակներին, իսկ այդ բակը՝ իր հերթին՝ թեև փոքր, բայց վանքի միակ արտաքին բակն է եղել։

դ) «Խորանիկ» կոչված շենքը, որն ավելի  
հիշատ մի փոքրիկ մատուռ է կղել, տեղափոք.

## § 4

Վերադարձնելով վանքի շենքերի նկարագրու-  
թյանը, այժմ անդրադառնանք վանքի ան-  
վան, շենքերի շինություն ժամանակի ու հա-  
րակից հարցերին:

ա) Վաճ՛կի անունը:— Հուշարձաններից այս խումբը մեր գրականության մեջ հայտնի է «Շիմուրատի վանք» անունով: Պարզ է, որ այդ անունը չէր կարող վանքի պատմական անունը լինել: Ուսումնասիրելով հին բանասերների տված տեղեկություններից այս վանքի մասին, մեր ուշադրությունը գրավեց Մալար եպիսկոպոս Բարխուդարյանի հետևյալ հիշատակությունը «Արցախ»-ի 336 էջում<sup>2</sup>. «Վանքիս արևելյան կողմում, ոչ այնքան հեռի, կա գյուղատեղի և հանգստարան Շիմուրատ անուն»: Բազմաշխատ բանասերի հիշած գյուղատեղի հետքերը մինչև մեր օրերն էլ մնացել են, բայց աննկատելի դրոշմամբ: Ծառտարապետական հուշարձանների պահպանության կոմիտեի հին քարտեզում պահված տեղեկություններից երևում է, որ այդ տեղում, սրանից 18—20 սարի առաջ, եղել են տների, ջրաղացների և գերեզմանների հետքեր 12—17 դարերից: Այդ գյուղատեղում հայտնաբերվել են թուրքերի, պղնձե ամանների և այլն: Բացի այդ, նույն աղբյուրից բաղված տեղեկությունների հաժաձայն, վանքի արևմտյան կողմում գտնվող սարալանջին եղած ավերակ ամրոցը կոչվել է «Շիմուրատի», որը հայտնի է և «Սաղնաբար» անունով: Այսպիսով պարզվում է, որ «Շիմուրատ» ոչ թե վանքի անունն է, այլ նրա շրջակա բնակավայրի, որի անունով և կոչել են վանքը, որը մի սովորական Կրեույթ է մեր վանքերից շատերի համար:

2. *Մակար եպիսկոպոս Բարխուդարյան, «Արշախ»,  
Բաքու, 1895 թ.*

Իսկ թե ինչ է եղել այս վանքի պատմական անունը, այդ մասին նույն բանասեր Մակար եպիսկոպոս Բարխուդարյանը իր «Պատմություն Աղվանից աշխարհի» աշխատության 188 էջի 1 ծանոթագրության մեջ ենթադրում է՝ «Գուցե անուն «Փետակից» անունն եղած լիներ», որտեղ, ըստ նույնի, կրոնավորել է Կյուրիկյան վերջին Աղսարթանը: Թեև դա լուր ենթադրություն է, սակայն հավանական ենթադրություն, մանավանդ եթե նկատի ունենանք «Փետակից» անվան պատշաճությունն այդ հուշարձանին, ըստ տեղագրության:

Վանքի անվան մասին հիշատակություն կա նրա վիճագրության մեջ երեք տեղում, մեր համարակալությամբ № 2, 3 և 15 արձանագրություններում, որից նրանում է, որ հուշարձանները կոչվելիս են եղել «Աստվածածնի» անունով:

Նկատի ունենալով վերոհիշյալները, մեր կարծիքով, հիշտ կլինի հուշարձանների այդ խումբն անվանել «Երմուրատի Աստվածածնի անվան վանք»:

բ) Երմուրյան մամանակը և շինողները:— Պատմագետ ճարտարապետներին թողնելով վանքի հուշարձաններից յուրաքանչյուրի շինության հիշտ ժամանակաշրջանը որոշելու հարցի վերջնական լուծումը, այստեղ համառոտակի կամփոփենք հիշյալ հարցի առթիվ մեր անձնական գիտողությունները:

Մեր պատմագիրները, որքան գիտենք, որևէ հիշատակություն չունեն այս վանքի շինության մասին:

Ճարտարապետական հուշարձանների պահպանության կոմիտեի քարտերում վանքի շինության թվականը գրված է 1181 թվին, իսկ թե ինչով է հիմնավորվում այդ պարզ չէ: Թվում է, թե Կոմիտեն այդ թվականը քաղել է բանասեր Մակար եպիսկոպոս Բարխուդարյանի «Արցախ»-ի 335 էջում գրված 1 ծանոթությունից<sup>3</sup>, որտեղ գտնում ենք թե՛ այդ թվականը և թե՛ դրա հիմնավորումը, որը կատարված է սխալ հաշվարկումով: Բարխուդարյանը, հիմք ունենալով հուշարձանների խմբից «Նորանիկ»-ի մուտքի ճակատաքարի արձանագրությունը, որտեղ այդ շենքի շինարարությունը գրվում է «նորս շրջագայիս», այսինքն «նոր» կամ «Փոքր» տոմարի (Հովհաննես Սարկավազի) ԿԵ թվին, մեր թվականությամբ դուրս է բերում 1181 թվականը, «նոր» կամ «Փոքր» տոմարի սկիզբը հաշվելով 1116 թվին: Իհարկե այդ հաշվումը սխալ է, որը մի այլ տեղ՝ «Պատմություն Աղվանից աշխարհին» աշխատության 180—181 էջերում, հենց ինքը՝ բանասերը՝ ուղղում է, Սարկավազադի տոմարի սկիզբը հաշվելով 1085 թվից, նկատի ունենալով պատմագիրների Կի-



ՇԽՄՈՒՐԱՍՏԻ ՎԱՆՔ.— Եկեղեցին  
Եյուսիս-արևելից

րակոս Գանձակեցու և Մխիթար Այրիվանեցու հիշատակություններն այս առթիվ:

«Նոր» կամ «Փոքր» (Սարկավազադի) տոմարի սկիզբը 1084 թվից է, որով Մակար եպիսկոպոս Բարխուդարյանի ուղղումը մի տարվա տարբերությամբ ճշտվում է, մի բան, որը անտես է առել Կոմիտեն:

Ինչպես տեսնում ենք, այս հուշարձանների շինության ժամանակը որոշելու համար, այլ աղբյուր կամ հիմք չունենալով, բանասեր Մակար եպիսկոպոս Բարխուդարյանը դիմել է հուշարձաններում պահված տվյալներին, որը նման զեպերում միակ հիշտ ձևն է այս հարցի լուծման գործում, ուստի մենք ևս հետևենք նրա օրինակին:

Վանքի վիճագրության մեջ, զմբախտաբար, թվագրեր քիչ կան՝ ընդամենը 4 հատ: Դրանք հետևյալներն են, ըստ ժամանակագրական կարգի.

1. «Նորանիկ»-ի մուտքի ճակատաքարի վրա, «Փոքր» տոմարով ԿԵ (65+1084)=1149 թ.

3. Տե՛ս մեր № 2 ծանոթությունը:



ՇԽՈՐԻՍԻ ՎԱՆՔ.— Ժամատան  
նյութապին սյունը

2. եկեղեցու արևելյան ճակատին ՈՂԷ (697+551)=1248 թ.

3. եկեղեցու արևմտյան մուտքի ճակատաբարի վրա ՉԺԳ (713+551)=1264 թ.

4. Գավթում գտնվող խաչքարի ճակատին ՌԿԸ (1068+551)=1619 թ.:

Այս թվագրություններից վերջինը, որը շենքի վրա չէ, այլ խաչքարի, և ըստ ժամանակի համեմատաբար շատ նոր է, միայն ապացույց է, որ 17-րդ դարի սկզբներին վանքը շենք է եղել, ուստի և մեր առաջադրած հարցի լուծմանը ծառայել չի կարող:

Ըստ ժամանակագրական կարգի, կրկին դառնանք (վերը բերված թվագրությունների կարգով) «Խորանիկ»-ի արձանագրությանը:

Համաձայն այդ արձանագրության (մեր համարակարգությամբ № 1) «Խորանիկ»-ը շինել է ոմն Տեր Գրիգոր (համանաբար ցահանա) 1149 թվին, Սաղուն մեծ իշխանի հրամանով:

Եթե այդ շենքն առանձին լիներ, կհամարվեր մատուռ, բայց քանի որ շինողն այդ համարում է խորան, ուրեմն դա պետք է կից եղած լիներ մի եկեղեցու Այդ եկեղեցին չէր

կարող լինել ներկայումս գոյություն ունեցող՝ Աստվածածնի անվան՝ եկեղեցին, որովհետև վերջինս, գտնվելով դրա հարտարապետական ոճից և վրան պահված երկու թվագրություններից, ավելի նոր շենք է: Բացի այդ, այս երկու շենքերի մեջ որևէ օրգանական կապ չկա, ինչպիսին մենք տեսնում ենք եկեղեցու և նրան կից հետագայում տեղավորված երկու օժանդակ շենքերի՝ ժամատան և դավթի մեջ: Տեղադրված լինելով եկեղեցու արևելյան ճակատի դժից շորս մետր դուրս՝ դեպի արևելք, իր դիրքով «Խորանիկ»-ի շենքը ներկայիս եկեղեցուն իրրև խորան ծառայել չէր կարող, մասնավորապես որ եկեղեցին ունի շորս խորան, որոնք լիովին բավական են համեստ չափեր ունեցող մի տաճարի համար:

«Խորանիկ»-ի արձանագրության 6—8 շարքերում Տեր Գրիգորը պատվիրում է. «Որք սպասաւորէք ի սա, զիս զՏէր Գրիգոր և զծնողս իմ յաղօթս լիշխաշիք», որից պետք է եզրակացնել, որ այդ անդը (սխառատեղը) սպասավորներ, այսինքն կրթավորներ, միաբանություն է ունեցել: Պարզ է, որ միայն մի մատուռի, կամ «Խորանիկ»-ի համար միաբանություն (սպասավորներ) չէր լինի, այլ մի վանքի:

Այս բոլորը նկատի ունենալով, դալիս ենք այն եզրակացության, որ «Խորանիկ»-ի շինության ժամանակ, այդ վանքում մի այլ հին՝ եկեղեցի է եղել, որն այժմ գոյություն չունի:

Հավանաբար այդ եկեղեցին «Խորանիկ»-ի նման մի անշուք շենք է եղել, որը հետագայում, որևէ պատճառով, քանդվել է կամ քանդվել են, թողնելով միայն «Խորանիկ»-ը, իրրև աղոթատեղի, մինչև նոր եկեղեցու շինության ավարտը, և փոխարենը շինել ներկայիս Աստվածածնի անվան եկեղեցին: Այս նոր եկեղեցին շինել են ոչ անմիջապես հին եկեղեցու տեղում, այլ ավելի արևմուտք, որով ստացվել է մի ներքին, փոքր բակ, եկեղեցու, «Խորանիկ»-ի, հյուսիսային պարսպի և վանականների բնակարանների մեջ:

Ընդունելի լինի մեր վերոհիշյալ ենթադրությունը թե ոչ, իրրև անժխտելի փաստ մնում է այն, որ այս վանքի ներկայումս գոյություն ունեցող շորս շենքերից ամենահինը 1149 թվին շինված «Խորանիկ»-ն է, և որ ինքը՝ վանքը՝ գոյություն է ունեցել այդ թվականից առաջ:

Ժամանակագրական կարգով վերը բերված ցուցակից Աստվածածնի անվան եկեղեցու արևելյան ճակատին խաչքար գրեթե փոքրված ՈՂԷ=1248 թվագրին է: Չենք կասկածում, որ այս թվագիրը եկեղեցու շինարարության հետ կապ ունի, բայց և չի կարելի

այդ թվականն ընդունել իբրև այդ շենքի շինությունն ավարտելու թվական, որովհետև հակառակ պարագային կղրվեր մի ամբողջ արձանագրություն, որի մեջ կհիշվեր և շինողի անունը: Քանի որ այդպես չի արված, այդ թվականը պետք է համարել իբրև մի ծանոթություն, որն արված է երկար ժամանակ տևող շինարարական աշխատանքի ընթացքում: Նման դեպք մենք նկատել ենք նաև Իջևանի շրջանի Դեղձնուտի վանքի գլխավոր եկեղեցու հյուսիսային պատի վրա՝ ներսից<sup>4</sup>:

Այդ թվագրի տեղը (լուսամուտից ցած) ցույց է տալիս, որ 1248 թվին շենքը հաղիվ լուսամուտի գծին հասած լինել, իսկ այդ ծանուցումն անելու փաստը վկայում է, որ շինողը կամ շինողները հույս չեն ունեցել մոտ ժամանակում վերջացնելու գործը, որն րատ երևույթին շատ է ձգձգվել:

Եկեղեցու գլխավոր (արևմտյան) մուտքի ճակատաքարի վրայի 2ԺԳ թվագիրը (1264 թվականի) թև շինարարական բնույթի արձանագրության չի վերաբերում, սակայն մի կողմնակի ապացույց է եկեղեցու շինության ուշ ավարտելուն: Այս ննթաղությունը հաստատելուն իբրև փաստ կարող է ծառայել այն հանգամանքը, որ վանքի, հատկապես եկեղեցու վիմագրության մեջ շինողի կամ շինողների մասին որևէ հիշատակություն չկա, բացառությամբ «Նորանիկ»-ի արձանագրության, որը, ինչպես տեսանք, վանքի շինարարության նախնական շրջանին է վերաբերում: Թվում է, թե դրա պատճառը կարող էր լինել միայն այն, որ ձգձգված շինարարության ընթացքում մի քանի շինողներ հաջորդել են իրար, որոնցից առաջինը, բացի ՈՂԷ թվագրից, որևէ այլ բան չի հիշատակել, շինարարությունը վերջացած չլինելու պատճառով, իսկ վերջինը, այսինքն կառուցումն ավարտող պարզապես լլացել է իր նախորդների հիշատակը հավերժացնել, որը ստիպված կլինի անել շինարարական արձանագրություն փորագրելու դեպքում:

Մեր կարծիքով եկեղեցու շինարարությունը տևել է շուրջ 20 տարի, որն այնքան էլ բացատրիկ մի երևույթ չէ, և վերջացել է 1264

թվին, կամ դրանից մեկ կամ երկու տարի առաջ: Իսկ թե ովքեր են եղել շինողները, դրա մասին որոշ բան ասել չի կարելի, բացի այն ննթաղությունից, որ դրանք եղել են վանքի իրար հաջորդող վանահայրերը, որոնք այդ աշխատանքը կատարել են ուխտավորների նվիրատվություններով կամ այլ եկամուտներով: Եթե որևէ իշխան կամ ունեւոր մեկը շինած լիներ այդ եկեղեցին, նախ՝ համեմատաբար ավելի արագ կկատարվեր այդ աշխատանքը, և երկրորդ շինողն անպայման իր անունը փորագրել կտար որևէ աշքի ընկնող տեղում:

Վանքի մյուս երկու շենքերի, այսինքն ժամատան և գավթի շինարարության ժամանակի մասին որևէ հիշատակություն չլինելու, կամ եղած սակավաթիվ արձանագրությունները (ժամատանը) առանց թվագրերի լինելու պատճառով, միայն այն կարելի է ասել, որ դրանք երկուսն էլ շինված են Աստվածածնի անվան եկեղեցին շինելուց որոշ ժամանակ հետո, այն էլ ոչ միաժամանակ, այլ հաջորդաբար և ընդմիջումներով, որովհետև, ինչպես նկարագրական բաժնում հիշել ենք, ժամատունը կցված է եկեղեցուն, իսկ գավթի՝ եկեղեցուն և ժամատանը: Իսկ թե որքան են տևել դրանցից յուրաքանչյուրի շինարարությունը և ընդմիջումները՝ դժվար է ասել: Ընդունելով, որ այդ վանքում շինարարական աշխատանքի պայմանները եկեղեցու շենքն ավարտելուց հետո էլ նույնն են մնացել, ժամատան շինությունը կընկնի 13-րդ դարի վերջին, իսկ գավթի՝ 14-րդ դարի սկզբին:

Իհարկե, վերահիշյալ եզրակացությունների զգալի մասն արվում է ենթադրաբար, որոնց հաստատումը կամ հերքումը կկատարվի մասնագիտական մանրակրկիտ ուսումնասիրությունից հետո: Մնում է հուսալ, որ մեր պատմագետ ճարտարապետները կզբաղվեն այս ուշագրավ, իր պարզությամբ գեղեցիկ և զբախտաբար հեռավորության պատճառով քիչ այցելվող հուշարձանների խմբով, որը հետաքրքիր և գրավիչ այցի տեղ է նաև մեր երկրի գեղեցիկ վայրերով հետաքրքրվող տուրիստների համար:

#### ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Շինությունի վանքի վիմագրությունն այնքան էլ հարուստ չէ: Պահպանված արձանագրությունների թիվը 15 հատ է: Դրանցից զատ մի երկու տեղ կան արձանագրության նմանք, որոնք մենք չենք բերում այստեղ, որովհետև պահպանված գրերից որևէ իմաստի ստացվում: Արձանագրությունների մի

մասը հողմահարված է: Որոշ գեպքերում, ըստ իմաստի կամ ենթադրաբար մենք լրացրել ենք այդպիսի տեղերը անկյունավոր փակագծերի մեջ, դրա մասին հիշելով ծանոթություններում: Կարևոր տեղերում սովորական փակագծերի մեջ գրել ենք բնագրում բաց թողնված գրերը կամ բառամասերը:

Այն արձանագրությունները, որոնք առաջին անգամ են հրատարակվում, նշված են աստղանիշով՝ համարների դիմաց:

<sup>4</sup> Տե՛ս «Էջմիածին» ամսագրի 1953 թվականի ապրիլ ամսվա համարի 37 էջի երկրորդ սյունիկում:

№ 1. ԳԱՎԹԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՊԱՏԻ ՄԻՋԻՆ ՈԱՅՎՈՂ «ԽՈՐԱՆԻԿ»-Ի ՄՈՒՏՔԻ ՎԵՐԵՎՈՒՄ ԴՐԱՆԸ ՔԱՐԻ ՎՐԱ.

- 1 ՅԱՍԻ :4: ԵՐՈՐՈՂԻ :Ե: Ե(Ր)ՈՐՈՂԻ ՆՈՐՍ ՇՐ-
- 2 ԶԱԳԱԽՍ: ԵՍ ՏՐ ԳՐԻԳՈՐ ՇԻՆԵՑԻ ԶԽՈՐԱ-
- 3 ՆԿԱՍ ԱԾԱՔՆԱԿ ՀՐԱՄԱՆԱԽ ՍԱԴՈՒՆՈ
- 4 ՍԵԾԻ ԻՇԽԱՆԻ ՎԱՍՆ ՅԻՇԱՏԱԿԻ Ն(Ն)ՋԵՑ-
- 5 ԵԼՈՑ ԻԻՐՈՑ ԵԻ ՅԱԻԳՆԱԿԱՆՈՒԹԻ(Ի)Ն ԱՆԶ-
- 6 ԻՆ ԻԻՐՈ ՈՐԵ ՍՊԱՍԱԽՈՐ(Է)Ք Ի ՍԱ ԶԻՍ ԶՏՐ
- 7 ԳՐԻԳՈՐ ԵԻ ԶԾՆՈՂՍ ԻՍ ՅԱՂԱԽԹՍ ՅԻՇ-
- 8 ԵՍԶԻԲ ԸՆԴ ՆՄԻՆ ԵԻ ԶԱՅԼ ԱՇԽԱՏՈՂՄՆ

№ 2. ԳԱՎԹԻ ՀՅՈՒՄԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄՈՒՏՔԻ ՀԱՅԱՏԻՆ, ՆԵՂ ԵՎ ԽՐԱՐ ՔԱՐԻ ՎՐԱ.

- |                |                      |
|----------------|----------------------|
| 1 ԵՍ ԳՐ(Ի)Գ-   | 6 ԲԱՆՔՍ ԷՏՈՒ-        |
| 2 ՈՐԷՍ ՍԻԱՅ-   | 7 Ն ԻՆԶ :Ա: Ժ-       |
| 3 ԲԱՆԵՑԱՅ      | 8 ԱՄ ՂԵՐՈՆԻՍ         |
| 4 ՄՐ ԱԾԱԾ-     | 9 ՂՊ ԿԱՏ-            |
| 5 ՆԻՍ ԵԻ ՍԻԱՅ- | 10 ԱՐԻԶ(Ք) ԱԻՐ(ՂՆԻՆ) |

9-րդ շարքի սկզբի «Զ» կրճատ բառը վերծանում ենք «ՀԱՅՐԱՊԱՊԱՏ»:

№ 3. ԳԱՎԹՈՒՄ, ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԴԻՆԻՑ ԱԶ ԴՏՆՎՈՂ ԽԱՉՔԱՐԻՆ ԿԻՑ ՄԻ ՔԱՐԻ ՎՐԱ

- 1 ԵՍ ՍՈՒԼՏԱՍ
- 2 ԵԻ ԱՍՈՒՍԻՆ ԻՍ Ս(Ի)-
- 3 ԱՅԲԱՆԵՑԱՔ ԱԾ-
- 4 ԱԾՆԻՍ ՍԻԱՅԲԱ-
- 5 ՆՔՍ ԵՏՈՒՆ :Բ:
- 6 |Ժ|ԱՍ Ի ՏԱԻ-
- 7 |ՆԻ| ՄԳ Ս

1. 6-րդ շարքի «ԺԱՍ» բառը և 7-րդի «ՆԻ» բառամասը արձանագրության նախորդ շարքերի գծից դուրս է դնելի մասն: Անհյուսնավոր փառապանքի մեջ առնված գրերը եղծված են:

2. 7-րդ շարքի միացյալ «ՄԳ»-ն անշատ «Ս» գրերը միասին էնթացրում ենք, որ պետք է լինի «ՍԱՐԳՍԻ»:

№ 4. ԳԱՎԹԻ ՄԵԶ, ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԴԻՆԻՑ ՄՈՒՏԻ ԽԱՉՔԱՐԻ ՀԱՅԱՏԻՆ: (Խաչքառը ղեղնադույն աժադարարից է, վրան բանդակված աչ կողմում մի աղամարդ, ձեռքերը կրծքին ծալած, իսկ մասն կողմում՝ մի կին, գրկին մի երեխա, պառկած գրաբնագրի):

- 1 ՄՐ ԽԱԶՍ ԲԱՐԷԽԱԽՍ: ԳՈՒԼՍԻԼԻԲԻ
- 2 ՍԱՐԳԻՍԻՆ: ԹՎ ՈՎԸ

№ 5. ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՏԻՆ (ԴՐՄԻՑ), ԱՐՄԻԴԻ ՀՈՒՍԱՄԱՐԻՏԻՑ ՅԱՄ, ԽԱՇՊԻ ԵՎ ԳԵՂԵՑԻԿ ԵՐԿԱՔԱԳՐՈՎ.

- 1 ԹՎԿ
- 2 ՈՂԷ

\* № 6. ԿԵՆՏԵՆՈՒ ՆԵՐՍՈՒՄ, ՀԱՐԱՎԱՅԻՆ ԽՈՐԱՆԻ ՄՈՒՏՔԻ ՎԵՐԵԼՈՒՄ, ՊԱՏԻ ՎՐԱ.

1 Ա ԺԱՄ ԵՂԷԿԱՆ ԴԱՐՔՆԻՆ ՄԱԿՈՆ ԱԼ-

2 ԹՈՒՆ ՄԱԿՈ ԽԱԹՈՒՆԻՆԻՆ

Այս արձանագրությանը, որը մենք չենք չկատել, վերցված է ճարտարապետական հիմնարկների պաշտոնական կամերի № 377 գործից:

ԿԵՆՏԵՆՈՒ ՆԵՐՍՈՒՄ, ՀՅՈՒՄԻՍՏԻՆ ԶԱՄԻ ԽՈՐԱՆԻ ՄՈՒՏՔԻ ՎԵՐԵԼ, ՀԱՋՈՐԴԱՐԱՐ ՓՈՐԱԳՐՎԱՅ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

\* № 7. 1 ՄՏԵՓԱՆՈՍԻ ՏԱԿՆԻՆ :Բ: ԺԱՄ ԻՆԱՅԻՆ ԵՒ ԴԷԴ-

2 ԻՆԻՆ ՈԿ ԽԱՓԱՆԷ ԴԱՏԻ Ի ՏԷ:

\* № 8. 1 ԿԱՄԱԿՆ ԱՅ ՍԱՌԱՅՍ ՄԻԱԲԱՆԵՑԱՅ ԵԿ(ԵՂ)ԵՑ-

2 ՈՅՍ ԵՏՈՒՆ ԻՆՁ ՆԱԿԱՍԱՐԴԻ :Ա: ԺԱՄ ԿԱՏԱՐԻՉԸ-

3 Ն ԱԻՐՆԻՆ ՅԱՅ

\* № 9. 1 -:- ՅԱՆՈՒՆ ԱՅ ԵՍ ԴԱՆԻԷԼՍ ԵՒ ԱՅԼ ՄԻԱՅԲԱՆԸ-

2 Ս ԷՏ | ԿԱՔ ՅԱ(Յ)Տ | Ն | ՈՒԹԵ :Բ: | ԺԱՄ ՀԷՇԱՅ

3 ԴԵ | ԴԻՆ ԵՒ | ԱՄՈՒՆԻՆ | ՈԿ Խ-

4 ԱՓ | ԱՆԵ ԴԱՏ | Ի | ՅԱՅ

1. Այս արձանագրության վերջին երեք շարքերը փորագրված են երեք խաչերի երկու կողմերին, իսկ երկու գիր՝ կենտրոնական խաչի մեջ:

2. Արձանագրության սկզբի շարքերն ազատագրված ձևով ունի Մակար Կպիսկոպոս Բարխուդարյանը— «Արցախ», էջ 335:

\* № 10. 1 ԿԱՄԱԿՆ ԱՅ ԵՍ

2 ՅՈՂ: ՄԻԱԲԱՆԵՑԱ

3 ԵԿԵՂԵՑՈՅՍ: ԵՒ ԵՏ-

4 ՈՒՆ Ի ՏԱԿՆԻ ԱՌԱՔ.

5 ՅՈՂ: ԵՒ ՅԱԿ :Ա: ԺԱՄ

6 ԱՆԽԱՓԱՆ: ԿԱՏԱՐԻՉ-

7 Բ ԱԻՐՆԻՆ ՅԱՅ

5-րդ շարքում «ԺԱՄ» բառի վրայի «պատիվն» անտեղի է դրված:

\* № 11. 1 Ի ՏԱԿՆ | Ի

2 ԹԷՈՂՈՐ ՈՍԻ :Ա:

3 ԺԱՄ ՍԷԴԻՆ

\* № 12. ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐՍՈՒՄ, ՀՅՈՒՄԻՍՏԱՅԻՆ ԽՈՐԱՆԻՆ ԿԻՑ ՄՈՒՅԹԻ ՄԵՋ ՀԵՏԱԴԱՅՈՒՄ  
ԱՊՑՑՐՈՒՄ ՆԵՋ ԵՆԴՐՈՒՄ ՄԻ ԿԱՐԱՆԱԴՈՒՅՆ ՔԱՐԻ ՉՈՐՍ ԺԱԿԱՏՆԵՐԻՆ, ԸՍՏ ԿԻՍԱՄՈՒՅԹԻ  
ՈՒՂՂԱՀԱՅԱՑ ԿՏՐՈՒՄՆԵՐԻ:

|   |       |                       |          |           |
|---|-------|-----------------------|----------|-----------|
| 1 | ԿԱՄ   | ԱԻՆ <sup>(-)</sup> ԱՅ | ՅՈ: ՊԵ   | ՂՍ ՄԻԱ-   |
| 2 | ԲԱՆԵ  | ՅԱ ԵՏ                 | ՈՒՆ ՍԲ   | ՍԱՐԳ(Ս)-  |
| 3 | ԻՆ Ա. | ԺԱՄ ԿԱ                | ՏԱՐԻՉ(Բ) | ԱԻՐՀ(Ն)ԻՆ |

Առաջին շարքում «Ուրեղ» անձնանուն է, պար է կարգադրվում «ՀԱՅԱՍՏԱՆԻ»:

\* № 13. ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԵՎԱՏԱՆ, ԺԱՄԱՏԱՆ ՄԵՋ ԲԱՆՈՂՈՂ ԳԼԽԱՎՈՐ ՄՈՒՅԹԻ ԽՈՐՍ  
ՀՈՂՄԱՀԱՐՈՒՄ ԺԱԿԱՏԱՐԱՐԻ ՎՐԱ:

- 1 Ի ԹՎ ԶԺԳ
- 2 ՄԵԾ ՅՈՒՍՈՎ ԵՍ ՄԻԱԹԱՆ
- 3 ԵԻ ԱՍՈՒՍԻՆ ԻՍ ԹՈՒՄԻ ՄԻԱԲԱՆԵՑԱԲ
- 4 ԵԿԵՂԵՑՈՒՍ ՄԻԱԲԱՆԵՍ ԵՏՈՒՆ ԻՆՋ :Զ: ԺԱՄ Ի
- 5 ՏԱԻՆԻ ԱԾԱՍՆԻՆ [ԱՂ]ԲԵՐԱՑԵԼԻՆ ԵԻ ԱՄ-
- 6 ՈՒՍՆ իՆՈՐ ՄԱՄԱԻՆ Ի ՏԱԻՆԻ <sup>(-)</sup>ՍԲ ԽԱՉԻՆ
- 7 Ա: ԺԱՄ ՏՐ ՏԻ[ՐԱՆ]ԻՆ Ի ՏԱԻՆԻ Ս[Բ].... ԿԱՏԱՐԻՉԵՆ
- 8 ԱԻՐՀՆԻՆ <sup>(-)</sup>ՅԱՅ

1. Ըստ երևույթին այստեղ-երեք տարբեր արձանագրություններ են, միևնույն բարի վրա փորագրված, առանց ընդմիջումների:

2. 5-7 շարքերի ընդգծված տեղերում բարը խիստ հողմաճարված լինելու պատճառով գրերը մասամբ եղծված և մասամբ էլ բոլորովին պակասում են: Պակասում են հատկապես «ԱՂԲԵՐԱՑԵԼ» անվան առաջին և «ՏԻՐԱՆ» անվան վերջին վանկերը, ուստի և այդ անունների վերձանությունը արվում է վերադաճությամբ:

«ԱՂԲԵՐԱՑԵԼ» անունը մեկ պատահում է նաև № 15 արձանագրության մեջ՝ անաղարտ:

\* № 14. ԺԱՄԱՏԱՆ ՀՅՈՒՄԻՍՏԱՅԻՆ ՄՅԱՆ ԽՈՐԱՆԻ ԺԱԿԱՏԻՆ:

- 1 ՅՈՒՍՈՎՆ ԱՅ ԳԵՇՄԱՐԴՍ [ՄԻԱԲ]-
- 2 ԱՆԵՑԱ ԵԿԵՂԵՑՈՒՍ ՄԻԱԲ-
- 3 ԱՆԵ ԷՏՈՒՆ ԻՆՋ :Ա: ԺԱՄ ՍԲ ՅԱԿ[ՐԻՆ] | ԶԱՄԷՆ ԵԿԵՂԵՑ
- 4 ԿԱՏԱՐԻՉԵ ԱԻՐՀՆ[ԻՆ] | ԻՐ

Արձանագրությունը հիմնականում փորագրված է խոյակի հարավային նախաթևին, իսկ 3-4 շարքերի վերջին մասը, որ ուղղահայաց գծով անջատված է՝ արեւմտյան նախաթևին:

\* № 15. ԺԱՄԱՏԱՆ ՀՅՈՒՄԻՍՏԱՅԻՆ ՄՈՒՅԹԻ ՎՐԱ ՆՍԱՍ ԿԱՄԱՐԻ ՈՏՔԻՆ, ԵՎ ՄՈՒՅԹԻ  
ԽՈՐԱՆԻ ԺԱԿԱՏԻՆ (ԵԿԵՂԵՑՈՒ ՄՈՒՅԹԻՆ ԿԻՑ՝ ՀՅՈՒՄԻՍՏԱՅԻՆ):

- 1 ՅՈՒՍ[ՈՒ]ՎՆ ԱՂԱԲԵՐԱ-
- 2 ՅԵԼՆՍ ԵԻ ԱՋԱՏԱԻ-
- 3 ՈՆԵ ՄԻԱԲԱՆԵՑԱԲ ԱԾԱ-
- 4 ՍՆԻՍ ԵԻ ՄԻԱԲԱՆԵՍ Է-
- 5 ՏՈՒՆ ՊԵՏՐՈՍ ԵԻ ՊԱԻ-
- 6 ՂՈՍԻ ՏԱԻՆԻՆ :Բ: ԺԱՄ
- 7 ԿԱՏԱՐԻՉ(Բ)Ն ԱԻՐՀՆԻՆ ՅԱՅ